Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունվարի 14-ի N 73 -Ն որոշման

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՌՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն

1.1. Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերառրակավորման համալիր ծրագրի նպատակը մշակույթի ոլորտի որակյալ կադրերով ապահովման արդյունավետ համակարգի ձևավորումը, մշակութային ծառայությունների որակի բարձրացումը, կադրային պահանջարկի բավարարումը և կադրերի արդյունավետ տեղաբաշխման պայմանների ստեղծումն է:

Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերառրակավորման համալիր ծրագիրը ներառում է մշակութային կազմակերպությունների (պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ոլորտում գործող, թատերահամերգային, գրադարանների, թանգարանների, գեղարվեստական կրթական հաստատությունների, մշակույթի տների և կենտրոնների) ստեղծագործական, վարչական և տեխնիկական աշխատողներին, ինչպես նաև, ըստ ցանկության, վերապատրաստմանը և վերառրակավորմանը կարող են ներգրավել նաև անհատ ստեղծագործողներ:

1.2. Սույն ծրագրով նախատեսվում է՝

ա) կադրերի մասնագիտական պատրաստում՝ կրթական հաստատություններում մասնագիտությունների ուսուցում ու որակավորում, ինչպես նաև առանձին մասնագիտությունների գծով կադրերի պատրաստում գիտամշակութային կազմակերպություններում.

բ) կադրերի վերապատրաստում՝ մասնագիտական որակավորման բարձրացում ու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործում.

գ) կադրերի մասնագիտական վերառրակավորում՝ մասնագիտական գիտելիքների և ունակությունների հիման վրա հարակից նոր մասնագիտության ուսուցում ու որակավորում։

2. Առկա իրավիճակը և հիմնական խնդիրները

Մշակույթի ոլորտում կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերառրակավորման գործառույթներն իրականացնում են գեղարվեստական կրթության համակարգում ընդգրկված երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցները, արվեստի միջին մասնագիտական, բուհական և հետբուհական հաստատությունները, մշակութային, գիտական և ստեղծագործական կազմակերպությունները։

Կադրերի վերապատրաստման և վերառրակավորման գործընթացներում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող, ինչպես նաև Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի մշակութային կազմակերպությունների աշխատողները։

ՀՀ-ում մշակույթի ոլորտում աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 15578, որից՝ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող 82 պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 5891 (վարչական անձնակազմը 342, մասնագետները՝ 3256, այլ աշխատողներ և տեխնիկական անձնակազմը՝ 2292)։ Երևանում գործող 65 մշակութային կազմակերպություններում աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 1656։ ՀՀ մարզերում համայնքային ենթակայությամբ մշակութային 1586 կազմակերպությունում աշխատողների թիվը կազմում է 7941։ Մշակույթի ոլորտի կադրերի առկա թվի, պահանջարկի և տեղաբաշխման վերաբերյալ տեղեկույթն ստացվել է 2007-2008 թթ. ՀՀ մշակույթի նախարարության կողմից Երևանում

և ՀՀ մարզերում իրականացված մոնիթորինգի արդյունքում և համեմատվել են Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հետ:

Մշակույթի բնագավառում կադրերի կառավարման խնդիրներն ամբողջովին կանոնակարգված չեն: Երկար տարիներ մշակույթի ոլորտում կադրերի վերապատրաստում և վերառրակավորում չի իրականացվել (բացառությամբ մի քանի փոքր ծրագրերի), ինչի արդյունքում նվազել է մշակութային ծառայությունների որակը, դժվարացել նոր տեխնիկական-տեղեկատվական միջոցների ներդրումը: Տարիֆառրակավորման բնութագրերի և ներկայացվող մասնագիտական պահանջների բացակայության հետևանքով կատարվել են ոչ նպատակային կադրային նշանակումներ: Նոր ժամանակների պահանջներին համահունչ անհրաժեշտություն է առաջացել կազմել մշակույթի ոլորտի մասնագիտությունների նորացված ցանկ, կադրերի պլանավորման և հավասարաչափ տեղաբաշխման նպատակով իրականացնել կադրերի հաշվառում՝ տեղեկատվական բազայի թարմացմամբ:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման շրջանակներում վերջին տարիներին իրականացվել են մի շարք ծրագրեր միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես, մասնագետների պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ 2007-2009 թթ. իրականացվել է ուսանողների ուսուցումն ու մասնագետների վերապատրաստումը ՌԴ-ում և Իտալիայում (երկու երկրների միջև ստորագրված երկկողմ փաստաթղթերի հիման վրա), «ICOM-ի թանգարանի աշխատողների մասնագիտական վարքագծի կանոնագրքի մասին» ծրագիրը, Հայաստանի ազգային պատկերասրահի ուսուցման կենտրոնում կազմակերպվել է «Մեդիաարվեստ և նոր տեխնոլոգիաները թանգարաններում» խորագրով սեմինարը, մասնագետներ են գործուղվել Սանկտ-Պետերբուրգ՝ մասնակցելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած «Թանգարանների կառավարում և մարքեթինգ» թեմայով տարածաշրջանային սեմինարին, կազմակերպվել է «Թանգարանների կառավարում» ՅՈՒՆԵՍԿՕ/ ICOM ազգային թրեյնինգը (դասընթաց-վարժանք): Երկու տարի է, նախարարության հատուկ վերապատրաստ-

ման ծրագրով, Ռուսաստանի Դաշնության թանգարանային առարկաների վերականգնման կենտրոնում վերապատրաստում են անցնում վերականգնող նկարիչները։

2006-2007 թթ. Եվրահանձնաժողովի «Culture 2000» ծրագրի շրջանակներում մեկնարկեց «Մշակույթ և համագործակցություն» ասոցիացիայի կոմից Հայաստանում երաժշտական գործիքների (լարային, փողային և ստեղնաշարային) վերանորոգմանն ուղղված ծրագիրը, որի շրջանակում վերապատրաստվեցին նաև պետական նվագախմբերի հայ մասնագետները, ինչպես նաև Ֆրանսիա երկարաժամկետ պատրաստման գործուղվեց հայ մասնագետը։

2008 թ. Հայ-իտալական մշակութային համագործակցության ծրագրի շրջանակներում իտալացի մասնագետների օժանդակությամբ հանրապետությունում առաջին անգամ Հռոմի Պալացցո Սպինելլի արվեստի և վերականգնողական աշխատանքների ինստիտուտի երեք մասնագետների կողմից իրականացվեց Մինաս Ավետիսյանի «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի տեղափոխումը և վերականգնումը, որին մասնակցեցին նաև հայ մասնագետները՝ ծանոթանալով վերականգնման աշխատանքների նոր միջոցներին։ Նույն համագործակցության ծրագրերի շրջանակում նախատեսվում է հիմնել վերականգնման կենտրոն, ուր նախատեսվում են նաև իրականացնել պատրաստման և վերապատրաստման ծրագրեր։

2.1. Կադրերի պատրաստում

Մշակույթի ոլորտում կադրերի մասնագիտական պատրաստումն իրականացվում է եռաստիճան համակարգով՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթական հաստատություններում։

Նշված համակարգի համար հիմնականում դիմորդներ են պատրաստում գեղարվեստական կրթական հաստատությունները՝ երաժշտական, գեղարվեստի և արվեստի դպրոցները։

2008 թ. տվյալներով ՀՀ-ում գործել են 212 դպրոց և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, որոնցից՝ երաժշտական 95, արվեստի 60, գեղարվեստի 26 դպրոց և մանկապատանեկան ստեղծագործական 31 կենտրոն՝ ընդհանուր 37469 աշակերտով։

Ստորև ներկայացնում ենք դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդվող առարկաները՝ ըստ մասնագիտությունների՝



Դպրոցներում դասավանդվող մասնագիտությունները տոկոսային հարաբերությամբ ներկայումս անհավասարաչափ են բաշխված, ինչը ներկայացվում է նշված գրաֆիկում (ՀՀ ե-րաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում դասավանդվող բաժինների տոկոսա-յին հարաբերությունը, ընդհանուրը՝ 100 տոկոս).



Ելնելով նշվածից, ինչպես նաև նկատի ունենալով միջին մասնագիտական և բարձրա-գույն կրթական հաստատությունների պահանջարկը՝ անհրաժեշտություն է առաջանում

ձեռնարկել քայլեր՝ դպրոցներում դասավանդվող առարկաների առավել համամասնական բաշխման համար:

Նշված խնդրի լուծման նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով որոշ մասնագիտությունների գծով սովորողների թվի խիստ նվազումը՝ 2007-2009 թթ. ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային գործիքների ուսուցման գծով իրականացվեց նպատակային պետպատվեր՝ ուսման վարձավճարների փոխհատուցմամբ: ***Ուսման վարձավճարի փոխհատուցում են ստացել 2007 թ. ՝ 134 դպրոցի 1993 սովորող, 2008 թ. ՝ 139 դպրոցի 2062 սովորող, իսկ 2009 թ. ՝ ազգային, լարային և փողային գործիքների ուսման վարձավճարի փոխհատուցում են ստացել 141 դպրոցի 2443 սովորող (ազգային նվագարաններ ՝2082, լարային գործիքներ ՝100, փողային գործիքներ ՝261):*** Նշվածի արդյունքում գեղարվեստական կրթական հաստատություններում ավելացավ ազգային, փողային և լարային գործիքներ սովորողների թիվը, ինչն ապագայում կապահովի նաև միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար համապատասխան դիմորդների առկայությունը:

2.1.1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ կադրերի պատրաստում

2009/2010 ուսումնական տարում ՀՀ-ում գործել է 29 նախնական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատություն, որից՝ 8-ում դասավանդվել են արվեստի և արհեստների 37 մասնագիտություն՝ 987 ուսանողով:

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվել են հետևյալ մասնագիտությունները՝

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
0500		
0514	Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն	Նկարիչ-ապակեպատող
		Ցուցափեղկեր ձևավորող
		Գեղարվեստական ձևավորող
		Սանրվածքներ ցուցադրող
		Հագուստների ցուցադրող (մոդել)

0515	Զարդակիրառական արվեստ	Ասեղնագործ-ժանեկագործ (ձեռագործ)
		Բրուտագործ
		Խեցեգործական գեղարվեստական իրեր պատրաստող
		Փայտյա գեղարվեստական իրեր պատրաստող
		Կաշվե գեղարվեստական իրեր պատրաստող
		Քանդակագործ-դրվագող
		Փայտի գեղարվեստական փորագրող
		Մետաղի գեղարվեստական մշակող
		Քարի գեղարվեստական փորագրող
		Ոսկրի գեղարվեստական փորագրող
		Ոսկերիչ
		Գորգագործ
		Գոբելենագործ
		Մանրանկարիչ
		Կիսաթանկարժեք և թանկարժեք քարեր մշակող
		Հախճապակյա իրեր նկարազարդող
		Դերձակ-մոդելավորող
2305	Լուսանկարչություն	Համակարգչային գրաֆիկայի օպերատոր
		Մինիլուսանկարչական տան օպերատոր
		Ֆոտոլաբորանտ
		Լուսանկարիչ
		Լուսանկարիչ-ձևավորող
2904	Վերականգնողական աշխատանքների իրականացում	Զարդային-գեղարվեստական որմնանկարներ վերականգնող
		Զարդային ծեփի և ծեփված իրեր վերականգնող
		Փայտյա հուշարձաններ վերականգնող
		Քարե հուշարձաններ վերականգնող
		Փայտե ստեղծագործություններ վերականգնող
		Քարե ստեղծագործություններ վերականգնող
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	Խճանկարիչ

Ներկա պահին նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվող մասնագիտությունների բազմազանությունն ապահովված է, սակայն հիմնական խնդիր է համարվում ՀՀ մարզերի ուսումնական հաստատություններում արվեստի և արհեստների ուսուցման հավասարաչափ բաշխումը (արվեստի և արհեստների ուսուցումը բացակայում է ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Տավուշի, Գեղարքունիքի և Կոտայքի մար-

զերում), ինչը կնպաստի ոչ միայն մշակույթի ոլորտն անհրաժեշտ կադրերով ապահովելուն, այլև նոր աշխատատեղերի ստեղծմանը և արհեստագործական մարզային կենտրոնների գործարկմանը: Ելնելով նշվածից՝ 2011-2015 թթ. առաջնային խնդիր է համարվում մարզերում արվեստի և արհեստների նախնական մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստման հավասար հնարավորության ստեղծումը՝ հաշվի առնելով տվյալ մարզի առանձնահատկությունները:

2.1.2. Միջին մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստում

2008/2009 ուսումնական տարում ՀՀ-ում գործել է 12 քոլեջ, որտեղ արվեստի մասնագիտությունների գծով սովորել է 2571 ուսանող:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվել են հետևյալ մասնագիտությունները՝

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը	Ընդունելության տեղերի թիվը		
			անվճար ուսուցում	վճարովի ուսուցում	ընդամենը
1	2	3	4	5	6
0501	Գործիքային կատարողական արվեստ		112	152	264
0501.01	Դաշնամուր	Նվագախմբի և համույթի մենակատար, երաժշտության դասատու, նվագակցող	43	72	115
0501.02	Լարային գործիքներ	Նվագախմբի և համույթի մենակատար, երաժշտության դասատու, նվագակցող	12	27	39
0501.03	Փողային և հարվածային գործիքներ	Նվագախմբի և համույթի մենակատար, երաժշտության դասատու, նվագակցող	16	22	38
0501.04	Ժողովրդական գործիքներ	Նվագխմբի և համույթի մենակատար, երաժշտության դասատու, նվագակցող	41	31	72
0502	Երգեցողություն	Ակադեմիական երգչախմբի, համույթի մենակատար, ժողովրդա-	68	96	164

1	2	3	4	5	6
		կան երգչախմբի, համույթի մենակատար			
0503	Երգչախմբավարություն	Երգչախմբի և ստեղծագործական համույթի ղեկավար, երգչախմբային առարկաների դասատու, երգչախմբի և համույթի մենակատար	9	24	33
0504	Երաժշտության տեսություն	Տեսական և երաժշտագիտական առարկաների դասատու, ռիթմիկայի դասատու	3	16	19
0505	Էստրադային երաժշտարվեստ	Էստրադայի մենակատար, ստեղծագործական կոլեկտիվի ղեկավար, դիջեյներ, ծրագիր վարողներ, շոումեններ	5	10	15
0506	Պարարվեստ		30	34	64
0506.01	Դասական պար	Բալետի մենակատար			
0506.02	Ժողովրդական պար	ժողովրդական համույթի մենակատար			
0506.03	Ժամանակակից պար	Համույթի մենակատար			
0507	Դերասանական արվեստ	Էստրադայի դերասան	17	20	37
0508	Կրկեսային արվեստ	Կրկեսի դերասան	0	0	0
0509	Ռեժիսուրա (ըստ ճյուղերի)	Ռեժիսոր	5	15	20
0510	Թատերական ձևավորման արվեստ	Նկարիչ-տեխնոլոգ			
0511	Էստրադային երաժշտարվեստ	Էստրադայի մենակատար, ստեղծագործական կոլեկտիվի ղեկավար	3	3	6
0512	Գեղանկարչություն	Նկարիչ, դասավանդող	38	83	121
0513	Քանդակագործություն	Նկարիչ-քանդակագործ, դասավանդող	8	17	25
0514	Դիզայն (ըստ ճյուղերի)	Դիզայներ	36	77	113
0515	Զարդային կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	Նկարիչ-վարպետ	2	3	5
0516	Արվեստի ստեղծագործությունների վերականգնում,	Նկարիչ-վերականգնող	2	15	17

1	2	3	4	5	6
	կոնսերվացում և պահպանում				
0517	Գրադարանային գործ	Գրադարանավար	0	15	15
0518	Սոցիալ մշակու-թային գործու-նեություն և ժո-ղովրդական ստեղծագործու-թյուն	Հեռուստառադիոլրա-գրություն	4	15	19
0520	Լուսային ռեժիսուրա	Տեխնիկ	0	0	0
0319	Պարի ուսուցում	Պարուսույց	0	15	15
0601	Էկոնոմիկա, հաշ-վապահական հաշվառում և աու-դիտ (մշակույթի ճյուղերի)	Աուդիտորներ	0	15	15
2019	Կինոսարքավո-րումների և տեսա-տեխնիկայի շա-հագործում	Տեխնիկներ	3	15	18
2307	Զբոսաշրջություն	Էքսկուրսավարներ	0	15	15
2305	Լուսանկարչական գործ	Լուսանկարիչ, լուսանկարիչ-տեխնիկ	0	0	0

Միջին մասնագիտական կրթական հաստատություններում հիմնական խնդիրներից է նոր մասնագիտությունների ներդնումը, մասնավորապես, «Հնչունային ռեժիսուրա», «Լուսային ռեժիսուրա», «Մենեջմենթ», «Էստրադային ռեժիսուրա», «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության գծով՝ մշակութային արժեքների վերականգնողներ՝ ըստ մասնագիտացումների, նվագարանների պատրաստում և վերանորոգում:

Առաջարկվող քայլերը. Մշակույթի ոլորտում միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի ճշգրտում և ուսումնական հաստատություններում մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման մասնագիտությունների ցանկի լրամշակում (նոր մասնագիտությունների ներառում), մշակույթի մասնագիտությունների գծով պետպատվերով սովորողների թվի ճշգրտում:

2.1.3. Բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստում

Կադրերի պատրաստում Հայաստանում

2008/2009 ուսումնական տարում բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստումը ՀՀ-ում իրականացնում են 5 բուհում, որտեղ 34 մասնագիտությունների գծով ուսանում են 3993 ուսանող: Մշակույթի մասնագիտություններ դասավանդող բուհերի ցանկը նշված է աղյուսակում՝

Բուհի անվանումը/ դասիչը	Մասնագիտությունը	Ուսանողների թիվը
1	2	3
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա		
Երաժշտական արվեստ 070100	Գործիքային կատարողական արվեստ	549
	Վոկալ արվեստ	213
	Խմբավարություն	21
	Ստեղծագործական	16
	Երաժշտագիտություն	18
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա		
Քանդակագործություն 072100	Քանդակագործություն	35
Գեղանկարչություն 071900	Գեղանկարչությոն	63
Գրաֆիկա 072200	Գրաֆիկա	57
Կերպարվեստի պատմություն և տեսություն 072300	Արվեստաբանություն	32
Դեկորատիվ կիրառական արվեստ 071100	Կիրառական արվեստի ստեղծագործողներ	51
Համակարգչային գեղարվեստական նախագծում 071800	Համակարգչային գրաֆիկա	61
Դիզայն 070900	Դիզայներ	196
Հագուստի մոդելավորում 072400	Հագուստի մոդելավորող	164
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ		
Դերասանական արվեստ 070200	Դերասան	248
Ռեժիսուրա 070300	Ռեժիսոր	122
Թատերագիտություն 070400	Թատերագետ	35
Պարարվեստ 070700	Պարարվեստի ռեժիսոր	29
Գրական ստեղծագործություն 071200	Դրամատուրգ	12
Կինոարվեստ 071300	Կինոարվեստի մասնագետ	107
Օպերատորություն 071400	Օպերատոր	91
Սոցիալ-մշակութային գործունեու-	Մենեջեր	24

1	2	3
թյուն (արվեստի կառավարում) 071700		
Գեղանկարչություն 071900	Գեղանկարիչ	38
Կինոգիտություն 072500	Կինոգետ	10
Երևանի պետական համալսարան		
Արվեստաբանություն 031500	Արվեստաբան	30
Մշակութաբանություն	Մշակութաբան	20
Արվեստ և հումանիտար գիտություններ 031600	Արվեստաբան	15
Գեղեցիկ արվեստ 031700	Գեղագետ	20
Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան		
Երաժշտական կրթություն 050700	Մանկավարժ	70
Կերպարվեստ և գծագրություն 050800	Մանկավարժ	78
Թանգարանային գործ և մշակութաբանություն	Թանգարանագետ	35
Գրադարանավարություն և մատենագիտություն	Գրադարանավար-մատենագետ	15
Սոցիալ-մշակութային գործունեություն, այդ թվում՝	Մանկավարժ	
Լուսանկարչություն	Գեղարվեստական լուսանկարիչ	18
Փողային և էստրադային, ժողգործիքների նվագախմբերի ղեկավարում	Նվագախմբի ղեկավար	10
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան		
Ճարտարապետ 271500	Ճարտարապետ-դիզայներ	90

Երևանի չորս բուհերում (Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Երևանի գեղարվեստի ակադեմիա, Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան) կատարվում է 931 դիմորդի ընդունելություն, այդ թվում՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում՝ 151, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ 204, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ 204, Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում՝ 372:

Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը տարեկան ավարտում է 102 շրջանավարտ՝ դերասան, ռեժիսոր, օպերատոր, թատրոնի և կինոյի տեսաբան, թատերական մենեջեր մասնագիտությունների գծով։

Պետական կոնսերվատորիան ամեն տարի կատարում է 120-123 դիմորդի ընդունելություն, իսկ բուհն ավարտում է մոտ 100 շրջանավարտ։ Դրա պատճառը երաժիշտների պահանջի անկումն է և ուսման բարձր վարձը (տարեկան 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ և ավելի)։

Գեղարվեստի ակադեմիան հիմնական մասնագիտությունների գծով (գրաֆիկա, քանդակ, գունանկար) տարեկան ունենում է 125 շրջանավարտ։ Այլ բաժիններում, հատկապես կիրառական մասնագիտությունների գծով (մոդելավորում, դիզայն), վիճակը փոքր-ինչ հուսադրող է։

Պատկերը գրեթե նույնն է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում։ Այս բուհը պատրաստում է գեղարվեստի, նկարչության և երաժշտության դասատուներ, նկարիչներ, սոցիալ-մշակութային գործունեության մասնագետներ։ Վերջերս բացվել է արվեստի պատմության և մշակութաբանության մասնագիտությունների ֆակուլտետը։ Ընդունվողների քանակը մեծանում է, բայց թե՛ Գեղարվեստի ակադեմիայի, թե՛ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտների մասնագիտական մակարդակը նվազում է։ Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մշակութային բուհի շրջանավարտների զգալի մասը չի աշխատում իր մասնագիտությամբ՝ ցածր աշխատավարձի պատճառով։

Մշակութային կրթական հաստատություններում մի շարք մասնագիտությունների գծով սովորողների թվի նվազումը պայմանավորված է ժամանակակից շուկայական հարաբերություններում սոցիալական վիճակով, ինչը նախընտրելի չի դարձնում մշակույթի ոլորտի մասնագիտությունների ընտրությունը, ինչպես նաև բարձր ուսման վարձավճարների պայմաններում մշակութային կրթությունը մատչելի չէ բոլոր ցանկացողների համար։

Բարձրագույն մասնագիտական կրթական հաստատություններում հիմնական խնդիրներից է նոր մասնագիտությունների ներդնումը, մասնավորապես, «Ռեժիսուրա» մասնագի-

տության մեջ ավելացնել հետևյալ մասնագիտացումները՝ **«Երաժշտական ռեժիսուրա», «Հնչունային ռեժիսուրա», «Էստրադային ռեժիսուրա», «Լուսային ռեժիսուրա»: Ժամանակակից մասնագիտությունների գծով ներդնել «Մենեջմենթ», «Մարքեթինգ», «Պրոդյուսերներ, ըստ ճյուղերի»** մասնագիտացումները: Մշակութային ժառանգության ոլորտում ներդնել «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության գծով՝ «Մշակութային արժեքների վերականգնողներ» ըստ մասնագիտացումների, «Նվագարանների պատրաստում և վերանորոգում» մասնագիտությունը:

Առաջարկվող քայլերը. Մշակույթի ոլորտում բարձրագույն մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի ճշգրտում և ուսումնական հաստատություններում մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման մասնագիտությունների ցանկի լրամշակում (նոր մասնագիտությունների ներառում), մշակույթի մասնագիտությունների գծով պետպատվերով սովորողների թվի ճշգրտում:

2.2. Կադրերի վերապատրաստում

Կադրերի վերապատրաստումն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտակրթական և մշակութային կազմակերպություններում և արտերկրում: ***2.2.1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ոլորտ***

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ոլորտում աշխատողների թիվը կազմում է 433: Կադրերի վերապատրաստում այս ոլորտում չի իրականացվել (միայն երեք մասնագետ վերապատրաստվել է արտերկրում): Հիմնական խնդիրներն են՝ հուշարձանների վերականգնման ավանդական մեթոդների փոխանցումը, ուսումնասիրման, հետազոտման և վերականգնման նոր տեխնոլոգիաների կիրառումը՝ ոլորտում գործող մասնագետների համար: Նշվածը վերաբերում է նաև ոչ նյութական մշակութային ժառանգության կադրերի վերապատրաստմանը:

2.2.2. Թանգարանային գործ և ոչ նյութական ժառանգության պահպանություն

ՀՀ-ում թանգարանային աշխատողների թիվը կազմում է 1456, այդ թվում՝ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններում՝ 1048, համայնքային ենթակայության թանգարաններում՝ 408։

Վերջին տարիներին թանգարանի աշխատողների վերապատրաստման դասընթացներ իրականացվել են «ՀԿ Հզորացման Ծրագիր Համաշխարհային Ուսուցում/ Հայաստան», «Մեդիաարվեստ և նոր տեխնոլոգիաները թանգարաններում», «Թանգարանների կառավարում» ՅՈՒՆԵՍԿՕ/ ԻԿՕՄ ազգային թրեյնինգ» ծրագրերով, որին մասնակցել է 234 թանգարանային աշխատող։ Սակայն թվարկած ծրագրերը պարբերական ու ամբողջական չեն և չեն ընդգրկում հանրապետության բոլոր թանգարանային աշխատողներին։ Թանգարանների բոլոր աշխատողները տեղեկացված չեն առաջավոր փորձին, «Թանգարան 1» թանգարանների առարկաների տեղեկույթի համակարգչային ծրագրին, թանգարանների ոլորտում կիրառվող նոր տեխնոլոգիաներին։

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում վերջին տարիներին մասնագետների վերապատրաստում չի իրականացվել, ինչը պայմանավորված էր ոլորտը կարգավորող իրավական ակտերի և համապատասխան ծրագրերի բացակայությամբ։ Նշված խնդիրների լուծման նպատակով ընդունվեց ՀՀ կառավարության 2007 թ. մայիսի 3-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի մասին» N 17 արձանագրային որոշումը, որի հավելվածի 9-րդ կետով նախատեսվում է ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության ոլորտին առնչվող մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերարտակավորման ծրագրերի իրականացում։ 2007-2008 թթ. վերապատրաստման ծրագրեր են իրականացվել ժողովրդական վարպետներ Անահիտ և Անժելա Աբգարյանների Ձեռարվեստի կենտրոնում, որտեղ 30 սան մասնակցեց 48 սեմինարի, ստեղծվեց «Հայ ավանդական դարբնագործության ուսուցման կենտրոն», որտեղ մեկ տարում վերա-

պատրաստվեց **5 դարբին**, Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի մասնակցությամբ իրականացվեց «Հայկական հուշանվերային գորգի ստեղծում» ծրագիրը։

Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության ոլորտում արհեստագործական մասնագետների վերապատրաստումը դիտարկվում է որպես հիմնական ուղղություն, քանի որ նախատեսվում է ստեղծել արհեստագործական կենտրոններ։

2.2.3. Գրադարանային գործ

ՀՀ-ում գրադարանային աշխատողների թիվը կազմում է 4800, այդ թվում՝ 889-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող գրադարաններում, 1674-ը համայնքային, 1400-ը դպրոցական գրադարաններում։

Վերջին տարիներին գրադարանային աշխատողների վերապատրաստման դասընթացներ իրականացնում է Հայկական գրադարանային ասոցիացիան, սակայն ուսումնական ծրագրերի բովանդակությունը, ուսուցման որակը, մեթոդական ապահովվածությունը և ուսումնական գործընթացի նյութատեխնիկական բազան չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին. բացակայում են հետևողականությունը և գործողությունների հաջորդականությունը, և վերջնական արդյունքը դեռևս մնում է անբավարար։

Ուսումնական գործընթացում առանձին դերակատարում ունեն միջազգային կազմակերպությունները և հիմնադրամները, մասնավորապես, Բաց հասարակության ինստիտուտի հայկական մասնաճյուղը, որոնք երբեմն ֆինանսապես աջակցում են ուսումնական ծրագրերի իրագործմանը։

Պետության կողմից գրադարանային ոլորտում իրականացվում են արդիականացման մի շարք ծրագրեր, սակայն գրադարանային կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգը հետ է մնում ժամանակակից գրադարանների զարգացման դինամիկայից ու պահանջներից։ Գրադարանների աշխատողները տեղեկացված չեն առաջավոր փորձին, գրադարանների ավտոմատացման գործընթացների և համակարգչային տեխնոլոգիաների վերաբերյալ ունեն ընդհանուր պատկերացումներ։

2.2.4. Թատերահամերգային գործունեություն և կինոարվեստ

Թատերահամերգային կազմակերպություններում ընդամենն աշխատում է 3731 ստեղծագործական աշխատող, այդ թվում՝ թատրոններում՝ 2450, համերգային կազմակերպություններում՝ 1169, կինոկազմակերպություններում՝ 212։ Վերջին տարիներին նշված կազմակերպություններում վերապատրաստման ծրագրեր չեն իրականացվել։ Վերապատրաստման ծրագրերի հիմնական խնդիր է դիտարկվում կազմակերպությունների վարչական աշխատողների վերապատրաստումը՝ նկատի ունենալով նոր տնտեսական հարաբերություններում կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, ստեղծվող շուկայական հարաբերություններին ինտեգրվելը, մենեջմենտի և մարքեթինգի բավարար իմացությունն ու կիրառումը։ Ստեղծագործական անձնակազմի վերապատրաստման համար մշակութային միջոցառումների անցկացման ընթացքում (փառատոներ, համերգաշրջաններ, բիենալեներ) անհրաժեշտ է կազմակերպել վարպետության դասընթացներ, փորձի փոխանակում և այլն։ Հիմնական խնդիրներից է նաև թատերահամերգային և կինոկազմակերպությունների տեխնիկական աշխատողների վերապատրաստումը, քանի որ վերջին տարիներին այդ կազմակերպությունները վերազինվել են ժամանակակից լուսաձայնային սարքավորումներով։

Առանձնակի կարևորվում է ՀՀ մարզերում գործող թատերահամերգային կազմակերպությունների ստեղծագործական աշխատողների վերապատրաստումը, ինչը կնպաստի այդ կազմակերպություններում մշակութային ծառայությունների որակի աճին։

2.2.5. Գեղարվեստական կրթության ոլորտ

2008/2009 ուսումնական տարվա ընթացքում նշված ուսումնական հաստատություններում դասավանդել է 3969 ուսուցիչ, որից՝ 1269-ը Երևանում։ Ուսուցիչների 60.8 տոկոսն ունեցել է միջին մասնագիտական կրթություն։ Ուսուցիչների մասնագիտացումների բաշխումը նշված է աղյուսակում՝



2008 թ. հիմնվեց Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը, որը մինչ այսօր իրականացնում է գեղարվեստական կրթական հաստատություններում կադրերի վերապատրաստման ծրագրեր, մասնավորապես, Երևանի և մարզային 11 մեթոդական կենտրոնում հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներին ու ուսուցիչներին ցուցաբերվում է ուսումնամեթոդական և գործնական աջակցություն:

Գեղարվեստական կրթության մատչելիության և որակի ապահովվածության բարձրացման նպատակով ստեղծվել է 33 հենակետային դպրոց (յուրաքանչյուր մարզում 3-ական), 2008 թվականին այդ դպրոցներում բոլոր մասնագիտությունների գծով կազմակերպվել են վերապատրաստման 10-օրյա դասընթացներ՝ Երևանի և մարզերի գեղարվեստական կրթության 360 ուսուցչի համար, որը կազմում է ուսուցիչների ընդհանուր թվի ընդամենը 9 տոկոսը:

Հիմնական խնդիրը փուլային եղանակով առաջիկա 5 տարիների ընթացքում մնացած ուսուցիչների վերապատրաստումն է (տարեկան 10-12 տոկոս):

2.3. Կադրերի վերառորակավորում

Մշակույթի ոլորտում առաջնային խնդիրներից է ստեղծագործական աշխատողների վերառորակավորումը (մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների հետևանքով նախկինում չի իրականացվել), որի հիմնական նպատակն առկա կադրերի արդյունավետ տեղաբաշխումն է,

աշխատանքային գործընթացներում մշակութային կազմակերպությունների առջև դրված նոր խնդիրներին համապատասխան՝ մշակույթի ոլորտում ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրումը, կառավարման արդի համակարգերի կիրառումը և շուկայական հարաբերություններով պայմանավորված նոր գործելակերպը: Կադրերի վերարտադրումը հնարավորություն կտա նաև մշակութային կազմակերպություններում նոր խնդիրներից բխող փոփոխությունների ընթացքում պահպանել փորձառու մասնագետներին և առավել արդյունավետ օգտագործել նրանց մասնագիտական փորձը և կարողությունները:

Մշակույթի ստեղծագործական աշխատողների մասնագիտական գիտելիքների և ունակությունների հիման վրա հարակից նոր մասնագիտության ուսուցումն ու որակավորումը կհանգեցնի մշակութային գործունեության արդյունավետության բարձրացմանը, մատուցվող մշակութային ծառայությունների որակի աճին և շուկայական հարաբերություններին ճկուն ինտեգրմանը:

<u>2.4. Կադրերի պատրաստում և վերապատրաստում արտերկրում</u>

Արտերկրում մասնագետների պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ 2006-2008 թթ. ընթացքում իրականացվել է 18 ուսանողի և 10 մասնագետի փոխանակում՝ ՌԴ ստեղծագործական բուհերում սովորելու և վերապատրաստում անցնելու համար, և 10 մասնագետի վերապատրաստում Իտալիայում:

Ռուսաստանի Դաշնության բուհերում պատրաստված և վերապատրաստված մասնագետների ցանկը՝ ըստ աղյուսակի՝

Բուհի անվանումը	Մասնագիտությունը	Ուսուցման ձևը
Գերասիմովի անվան կինոյի պետական ինստիտուտ	կինոգետ	պատրաստում
Սանկտ Պետերբուրգի կինոյի և հեռուստատեսության պետական համալսարան	կինոյի և հեռուստատեսության պրոդյուսեր, կինոգետ	պատրաստում
Պ. Ի. Չայկովսկու անվան Մոսկվայի պետական կոնսերվատորիա	սիմֆոնիկ դիրիժորություն	պատրաստում
Մոսկվայի կուլտուրայի պետական համալսարան	արտ-մենեջմենտ	պատրաստում

Մոսկվայի կուլտուրայի պետական համալսարան/ Սանկտ Պետերբուրգ	թանգարանային գործ, գրադարանային գործ	վերապատրաստում
Գրաբարի վերականգնողական կենտրոն	վերականգնող, գրաֆիկայի վերականգնող	վերապատրաստում
Մոսկվայի սցենարիստների և ռեժիսորների բաձրագույն երկամյա դասընթացներ	ռեժիսուրա	վերապատրաստում

Իտալիայի բուհերում վերապատրաստված մասնագետների ցանկը՝ ըստ աղյուսակի՝

Բուհի անվանումը	Մասնագիտությունը	Ուսուցման ձևը
Ֆլորենցիայի արվեստի և վերականգնման Palazzo Spinelli ինստիտուտում	վերականգնող	վերապատրաստում
Միլանի ճարտարագիտական համալսարանում	ճարտարապետություն	վերապատրաստում
Պերուջայի արտասահմանցիների համար նախատեսված համալսարան	իտալերեն լեզու և իտալական մշակույթ	վերապատրաստում
Միլանի ճարտարագիտական համալսարանում	ճարտարապետ-վերականգնող	վերապատրաստում
Մանտովայի երաժշտական կոնսերվատորիայում	վոկալ արվեստ	վերապատրաստում
Միլանի ուսումնասիրությունների համալսարանում	հնագիտություն	վերապատրաստում
Ֆլորենցիայի արվեստի և վերականգնման Palazzo Spinelli ինստիտուտում	վերականգնող	վերապատրաստում

Կադրերի պատրաստում և վերապատրաստում արտերկրում հիմնականում իրականացվում է այն մասնագիտությունների գծով, որոնք չեն դասավանդվում հայաստանյան բուհերում, կամ անհրաժեշտ ուսումնամեթոդական բազան բացակայում է: Նախատեսվում է նաև, որ արտերկրում վերապատրաստում անցած մասնագետները հետագայում կներգրավեն վերապատրաստման դասընթացներ Հայաստանում:

3. Ծրագրի նպատակները և խնդիրները

3.1. Ծրագրի նպատակներն են՝

ա) մշակութային ծառայությունների որակի բարձրացումը.

բ) շուկայական հարաբերություններում ստեղծագործական աշխատողների մրցունակության ապահովումը.

գ) մշակութային կազմակերպությունները որակյալ մասնագետներով բաշխման ապահովումը՝ մարզերի համաչափ զարգացման քաղաքականության համատեքստում.

դ) որակյալ մշակութային արտանդրանք ապահովելու նպատակով՝ նոր և ժամանակակից մասնագիտությունների ներդրումը.

ե) մշակույթի ոլորտի կադրային պահանջարկի ապահովումը։

3.2. Ծրագրի խնդիրներն են՝

ա) ոլորտի աշխատատեղերի և մշակութային ծառայություններ մատուցող մասնագետների շուկայի շարունակական ուսումնասիրումը, վերլուծումը. կադրային պահանջարկի ճշգրտումը,

բ) կադրերի հաշվառումը և տեղեկատվական բազայի նորացումը,

գ) մասնագիտությունների ցանկի ճշգրտումը և նոր տարիֆառակավորման բնութագրերի մշակումը, համակարգված պարբերական դասընթացների, սեմինարների, կազմակերպումը.

դ) վերապատրաստման և վերառրակավորման ծրագրերի ստեղծումը և հաստատումը՝ ըստ մասնագիտությունների.

ե) մշակույթի բնագավառում կադրերի կառավարման խնդիրների կանոնակարգումը, կադրերին ներկայացվող մասնագիտական և ծառայողական պահանջների սահմանումը։

4. Ծրագրի սկզբունքները

Ծրագրի սկզբունքներն են՝

ա) կադրերի պատրաստման գործընթացի շարունակականությունը, ուսուցման մատչելիությունը,

բ) ուսուցման համապարփակությունը և համակողմանիությունը,

գ) կրթական գործընթացի ձևավորումը, որը ներառում է կազմակերպչական կառուցվածքը, կիրառման եղանակը, պատրաստվածության մակարդակը, ուսուցման բովանդակությունը և տևողությունը,

դ) ինովացիոն բաղադրամասի գերակայությունն ուսուցման գործընթացում՝ կապված մասնագիտական գիտելիքների արդիականացման հետ,

ե) ուսումնական պլանների և ծրագրերի նորովի կազմումը՝ վերապատրաստվող կազմի մասնագիտական պատրաստվածության և ուսումնական խնդիրներին համապատասխան,

զ) իրականացման գործընթացների փուլային հաջորդականությունը, ուսուցման բովանդակության նորացումը և ընդլայնումը։

5. Վերապատրաստման և վերառրակավորման գործընթացի կազմակերպումը

5.1. Տվյալ տարվա վերապատրաստվողների և վերառրակավորողների ընդհանուր ցուցակը կազմվում է մարզպետարաններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և մշակութային կազմակերպությունների կողմից մշակույթի լիազոր պետական մարմին ներկայացված հայտերի հիման վրա (հայտերի ներկայացման ձևը և կարգը հաստատում է մշակույթի ոլորտի լիազոր պետական մարմինը)։ Մշակույթի ոլորտի լիազոր պետական մարմինն ամփոփում է ստացված հայտերը, ճշգրտում տվյալ տարվա պահանջարկը, կազմում գործընթացի տարեկան ժամանակացույցը և ձևավորում մրցութային հայտը։ Մրցութային հայտում նշվում է վերապատրաստվողների կամ վերառրակավորողների թիվը, անունը, ազգանունը, մասնագիտությունը, որակավորումը, վերապատրաստման կամ վերառրակավորման վայրը, ժամկետները և անհրաժեշտ այլ տվյալներ։

5.2. Յուրաքանչյուր տարվա վերապատրաստման և վերառրակավորման ծրագրերն իրականացնելու նպատակով հայտարարվում է մրցույթ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համա-

պատասխան։ Մրցույթը կարող է նաև անցկացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթին համապատասխան՝ մեկ անձից գնում կատարելու պայմանով, գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ։

5.3. Մշակույթի ոլորտի լիազոր պետական մարմինը մրցութային կարգով հաղթած կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագրեր՝ վերապատրաստման և վերարակավորման ծրագիրն իրականացնելու նպատակով։

5.4. Աշխատողների վերապատրաստումը և վերարակավորումն իրականացվում է դասընթացների ձևով՝ համապատասխան գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպություններում՝ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, գիտամշակութային ինստիտուտներում, այլ կազմակերպություններում։

5.5. Աշխատողները վերարակավորման և վերապատրաստման դասընթացներին պարտադիր կերպով մասնակցում են հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ։

5.6. Դասընթացներին մասնակցում են մշակույթի ոլորտում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցողները։

5.7. Դասընթացները կազմակերպվում և իրականացվում են մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից հաստատված ծրագրին համապատասխան։ Դասընթացի ծրագիրը ներառում է դասընթացում ընդգրկված առարկաների և թեմաների անվանացանկը, դրանց հատկացված ժամաքանակը, ուսուցման ժամանակացույցը, ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման ձևերը (ստուգարք, քննություն, հաշվետվություն և այլն) ու պահանջները։

5.8. Դասընթացներն անցկացվում են 15-25 ունկնդրից կազմված խմբերով (եթե ծրագրով այլ քանակ չի նախատեսված)։

5.9. Դասընթացներն անցկացվում են դասախոսությունների, սեմինարների, գործնական ու լաբորատոր աշխատանքների, գործնական խաղերի, հարցազրույցների, դիտումների, ստեղծագործական ինքնուրույն աշխատանքների և ծրագրով սահմանված այլ եղանակներով ու մեթոդներով։

5.10. Դասընթացների իրականացման հետ կապված ծախսերը կատարվում են պատվիրատուի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին։

5.11. Վերապատրաստման ժամանակահատվածում պահպանվում է ունկնդրի սահմանված աշխատավարձը։

5.12. Դասընթացներին մասնակցած ունկնդիրը մասնակցում է ամփոփիչ գնահատմանը՝ համաձայն դասընթացի ծրագրով սահմանված ձևի ու պահանջների։

5.13. Դասընթացների ունկնդիրների գնահատումն անցկացնում է գնահատման հանձնաժողովը, որի նախագահին կազմակերպության ներկայացմամբ հաստատում է մշակույթի ոլորտի լիազորված պետական մարմնի ղեկավարը, իսկ հանձնաժողովի կազմը՝ կազմակերպության ղեկավարը։

5.14. Ամփոփիչ գնահատման արդյունքում ունկնդիրն ստանում է դրական (ստուգված) կամ բացասական (չստուգված) գնահատական։ Գնահատման արդյունքում դրական գնահատական ստացած ունկնդրին տրվում է սահմանված նմուշի վկայական, որի պատճենը կցվում է աշխատողի անձնական գործին, իսկ բացասական գնահատման դեպքում տրվում է տեղեկանք դասընթացներին մասնակցելու մասին։

5.15. Իրականացնող կազմակերպությունը յուրաքանչյուր դասընթացի ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում պատվիրատուին ներկայացնում է հաշվետվություն աշխատողների վերապատրաստման, վերառրակավորման դասընթացի իրականացման արդյունքների վերաբերյալ։

6. Նախատեսվող գործողությունները

6.1. Կադրերի պատրաստում

Մշակույթի ոլորտի համար կադրերի պատրաստման գործընթացը հիմնականում իրականացվելու է երկու ուղղություններով՝ կադրերի պատրաստում Հայաստանում և արտերկրում։

Ծրագրի շրջանակներում կադրերի պատրաստումը նախատեսվում է իրականացնել այն մասնագիտությունների գծով, որոնց դասավանդումը չի իրականացվում ներկա մասնագիտական կրթական համակարգում, թեև դրանք մշակույթի ոլորտում այսօր պահանջարկ ունեն։

Առանձնակի կարևորվում է հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային համայնքների մշակութային կենտրոնները կադրերով ապահովելու խնդիրը, ինչի համար առաջարկվում է վերանայել բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) համակարգը, անցում կատարել նպատակային հասցեական գործուղումների համակարգին ընդունելության անվճար տեղերի սահմաններում։

Կադրերի պատրաստման ուղղությունները, մասնագիտությունները և պատրաստող կազմակերպությունները նշված են աղյուսակում՝

	Ուղղությունը	Մասնագիտությունը	Պատրաստող կազմակերպությունը		
			միջին մասնագիտական որակավորմամբ	բարձրագույն մասնագիտական որակավորմամբ	պատրաստող կազմակերպությունն արտերկրում
1	2	3	4	5	6
1.	Մշակութային ժառանգության պահպանություն	1.1. Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում (գործվածքի, մետաղի, խեցեղենի, արծաթագործ, փայտի, գորգերի)	Երևանի մշակույթի պետական քոլեջ	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	Ֆլորենցիայի արվեստի և վերականգնման Palazzo Spinelli ինստիտուտ Իտալիայի Պալացիո Սպինելիի ռեստավրացիոն դպրոց

1	2	3	4	5	6
		1.2. Նկարիչ-վերականգնող		Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	Ֆլորենցիայի արվեստի և վերականգնման Palazzo Spinelli ինստիտուտ Գրաբարի վերականգնողական կենտրոն
		1.3. Որմնանկարիչ-վերականգնող		Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	Ֆլորենցիայի արվեստի և վերականգնման Palazzo Spinelli ինստիտուտ
		1.4. Թանգարանային մենեջմենթ		Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
		1.5. Թանգարանային գովազդ (PR)		Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
		1.6. Թանգարանային մարքեթինգ		Խ. Աբովյանի անվ. մանկավարժական պետական համալսարան	
2.	Արվեստ	2.1. Ռեժիսուրա, այդ թվում՝			
		2.2. Հնչունային ռեժիսուրա	Երևանի մշակույթի պետական քոլեջ		
		2.3. Երաժշտական ռեժիսուրա (օպերային, էստրադային, օպերետային)		Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	
		2.4. Լուսային ռեժիսուրա	Երևանի մշակույթի պետական քոլեջ		
		2.5. Կրկեսային ռեժիսուրա	Էստրադային և		Մոսկվայի

1	2	3	4	5	6
			ջազային արվեստի պետական քոլեջ		կրկեսի և էստրադային արվեստի պետական ինստիտուտ
		2.6. Մնջախաղի ռեժիսուրա	Երևանի մշակույթի պետական քոլեջ	Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտ	
		2.4. Պարային ռեժիսուրա			Սանկտ Պետերբուրգի պարարվեստի ակադեմիա
		2.5. Արտ-մենեջմենթ		Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտ	Մոսկվայի կուլտուրայի պետական համալսարան
		2.6. Մարքեթինգ (մշակույթի ճյուղ)		Երևանի տնտեսագիտական համալսարան	
		2.7. Պրոդյուսեր		Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտ	Սանկտ Պետերբուրգի կինոյի և հեռուստատեսության պետական համալսարան
		2.8. Կինոգետ			Գերասիմովի անվան կինոյի պետական ինստիտուտ
		2.9. Սիմֆոնիկ դիրիժորություն			Պ. Ի. Չայկովսկու անվան Մոսկվայի պետական կոնսերվատորիա
		2.10. Պարուսույց (բալետի, ժողովրդական, ժամանակակից պարի)			Սանկտ Պետերբուրգի պարարվեստի ակադեմիա, Համբուրգի բալետային բարձրագույն դպրոց

Կադրերի պատրաստման վերջնական ցուցակները (այդ թվում՝ նաև արտերկրում) կկազմվեն մշակութային կազմակերպություններից ստացված տարեկան հայտերի հիման

վրա։ Ծրագրի գործողության ընթացքում կարող են սահմանվել կադրերի պատրաստման այլ կազմակերպություններ՝ նկատի ունենալով կոնկրետ պահանջարկը և կադրերի պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական բազան։

6.2. Կադրերի վերապատրաստում

Կադրերի վերապատրաստում նախատեսվում է իրականացնել Հայաստանի և արտերկրի բարձրագույն ուսումնական ու մշակութային հաստատություններում։ Կադրերի վերապատրաստումը կիրականացվի նաև մարզային և համայնքային կազմակերպություններում մայրաքաղաքից կամ արտերկրից հրավիրված համապատասխան մասնագետների կողմից։

Մշակույթի ոլորտի կադրերի վերապատրաստումը փուլային տարբերակով նախատեսվում է իրականացնել 2010-2015 թթ.՝ տարեկան ընդգրկելով աշխատողների 15-20 տոկոսը։

Առաջին փուլում 2010 թ. նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության թանգարանային և ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության կադրերի վերապատրաստման և վերարտակավորման ծրագրերը։

Երկրորդ փուլում կշարունակվեն նշված ծրագրերը, ինչպես նաև 2011-2015 թթ. կիրականացվեն թատրոնի, կինոյի, պարարվեստի, պատմության և մշակույթի հուշարձանների, մշակութային արժեքների պահպանության, գեղարվեստական կրթության, հրատարակչական ոլորտների կադրերի վերապատրաստման և վերարտակավորման ծրագրերը։

2010-2015 թթ. կադրերի վերապատրաստման ուղղությունները, վերապատրաստվողների թիվը՝ ըստ ներկայացվող աղյուսակի՝

		Վերապատրաստվողների թիվը	Վերապատրաստվողների թիվը՝ ըստ տարիների /տոկոս/թիվ					
	Մասնագիտությունը		2010	2011	2012	2013	2014	2015
1.	Պատմության և հուշարձանների պահպանություն	273		20 /55	40 /109	60/ 164	80 / 218	100 /273

2.	Թանգարանային գործ	1336	15/200	30/ 401	45 /601	60 /802	75 /1002	100 /1336
3.	Գրադարանային գործ	4800		20 / 960	40 / 1920	60 /2880	80 /3840	100 /4800
4.	Ոչ նյութական մշակութային ժառանգություն	120	15/18	30/36	45/54	60/72	75/90	100/120
5.	Թատերահամերգային գործունեություն	3619		20 /724	40 / 1448	60 /2171	80 /2895	100 /3619
6.	Գեղարվեստական կրթություն	3969		20 / 794	40 / 1588	60 /2381	80 /3175	100 /3969
7.	Սոցիալ-մշակութային գործունեություն	1618		20 /324	40 /647	60 / 971	80 /1294	100 / 1618
	Ընդամենը	15462	218	3148	6294	9441	12617	15462

2011-2015 թթ. կադրերի վերապատրաստումը կիրականացվի մշակութային կազմակերպություններում աշխատող երեք խմբերի՝ վարչական, մասնագիտական-ստեղծագործական և տեխնիկական աշխատողների հետ։

Կադրերի վերապատրաստումն ըստ ոլորտների կիրականացվի հետևյալ ուղղություններով՝

6.2.1. Մշակութային ժառանգության պահպանություն

6.2.1.1. Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն

	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
1	2	3	4
1.	Պատմաբան-վավերագիր	Երևանի պետական համալսարան Երևանի պետական մանկավարժական համալսարան	
2.	Հնագետ	Երևանի պետական համալսարան Երևանի պետական մանկավարժական համալսարան	
3.	Վիմագրագետ	Երևանի պետական համալսարան Երևանի պետական մանկավարժական համալսարան ՀՀ ԳԱԱ-ի հնագիտության և	

1	2	3	4
		ազգագրության ինստիտուտ	
4.	Ճարտարապետ	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն
5.	Դիզայներ	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան Երևանի գեղարվեստի ակադեմիա	Իտալիա, Ֆրանսիա
6.	Ճարտարագետ-շինարար	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	Իտալիա, Ֆրանսիա
7.	Ճարտարագետ-կոնստրուկտոր	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	Իտալիա, Ֆրանսիա
8.	Արվեստագետ	Երևանի գեղարվեստի ակադեմիա ՀՀ ԳԱԱ-ի արվեստի ինստիտուտ	
9.	Որմնանկարիչ-վերականգնող	Երևանի գեղարվեստի ակադեմիա	Իտալիա, Ռուսաստանի Դաշնություն, Բուլղարիա
10.	Նյութագետ	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	Իտալիա, Ֆրանսիա
11.	Արհեստագործներ		
	ա) քարագործ-վարպետ		Իտալիա, Ֆրանսիա
	բ) պատշար		
	գ) ատաղձագործ		Ռուսաստան
	դ) մետաղագործ		Իտալիա, Գերմանիա

6.2.1.2. Մշակութային արժեքների պահպանություն

	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
1.	**Փորձագետ** (կերպարվեստի, գործվածքի, հանդերձանքի-տարազի, ասեղնագործության, ժանեկագործության, սրբապատկերի, դրամի-բոնիստիկայի, ժամացույցների, նախնադարյան մշակույթի, բրոնզեդարյան մշակույթի, ուրարտական մշակույթի,	ՀՀ ԳԱԱ-ի արվեստի, հնագիտության և ազգագրության, պատմության ինստիտուտներ	Ռուսաստան

	վաղ հայկական մշակույթի, միջնադարյան մշակույթի, հին ձեռագիր ժառանգության, տպագիր ժառանգության, գեղարվեստական մետաղի, փայտարվեստի և կահույքի, գեղարվեստական ապակու և կերամիկայի, զարդաքանդակ քարի կամ խեցու (կամեյա), ոսկրի, ֆիլատելիստական նյութերի (նամականիշներ, ծրարներ, բացիկներ), ֆալիերիստիկայի և զինանիշագիտության, կնիքների, մեդալների, կրծքանշանների, շքանշանների, ճարտարապետական տարրերի, տեխնիկական միջոցների և կենցաղային սարքերի, փաստավավերագրական նյութերի, կինոֆոտո-ֆոնո-, աուդիոնյութերի, տնայնագործության և արհեստների, հնէաբանական, մարդաբանական նյութերի, նվազարանների, փոխադրամիջոցների, կրոնածիսական առարկաների)		

6.2.1.3. Թանգարանային գործ և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանություն

	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ - ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
1.	Արվեստաբան	Երևանի գեղարվեստի ակադեմիա ՀՀ ԳԱԱ-ի արվեստի ինստիտուտ	
2.	Էքսկուրսավար (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն)	Երևանի պետական համալսարան	
3.	Նկարիչ-դիզայներ, նկարիչ	Երևանի գեղարվեստի ակադեմիա	
4.	Մենեջեր	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
5.	Մատենագետ	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	

6.	Ֆոնդապահ	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
7.	Արխիվարիուս	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
8.	Վերականգնող (գործվածքի, մետաղի, խեցեղենի, արծաթագործ, փայտի, գորգերի)		Իտալիա, Ռուսաստանի Դաշնություն

6.2.1.4. Գրադարանային գործ

	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
1.	Գրադարանավար (գլխավոր, առաջատար, 1-ին և 2-րդ կարգի, շրջիկ)	Հայաստանի ազգային գրադարան Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
2.	Մատենագետ (գլխավոր, առաջատար, 1-ին և 2-րդ կարգի, վիճակագիր, օպերատոր)	Հայաստանի ազգային գրադարան Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
3.	Գրադարանային սոցիոլոգ	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
4.	Գրադարանային մենեջեր	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
5.	Կազմարար-վերականգնող	Հայաստանի ազգային գրադարան	
6.	Հավաքածուի մշակման և դասակարգման մասնագետ	Հայաստանի ազգային գրադարան	
7.	Տեղեկատվական ծառայության մասնագետ	Հայաստանի ազգային գրադարան	
8.	Հավաքածուի պահպանման մասնագետ	Հայաստանի ազգային գրադարան Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	

6.2.2. Թատրոններ, համերգային կազմակերպություններ, կինոարվեստ, պարարվեստ

	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
1	2	3	4
1.	Մենեջերներ	Երևանի Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն	Ռուսաստան, Իտալիա
2.	Բալետի դերասաններ		Գերմանիա, Շվեյցարիա
3.	Պարող, պարուհի	Երևանի Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն	
4.	Բալետմեյստեր-պարուսույցներ (ազգային և ժող.)		Գերմանիա, Շվեյցարիա
5.	Դերասաններ	Գ. Սունդուկյանի անվ. պետական ակադեմիական դրամատիկական թատրոն	Ռուսաստան
6.	Երաժիշտներ, այդ թվում՝		
7.	Դասական գործիքներ	Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա	Ռուսաստան
8.	Ժողովրդական գործիքներ	Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա	
9.	Պրոդյուսեր		Ռուսաստան
10.	Ձայնահնչյունային ռեժիսորներ		Ռուսաստան
11.	Լուսահնչյունային ռեժիսորներ		Ռուսաստան
12.	Ձայնային օպերատոր		Ռուսաստան
13.	Նեգատիվ մոնտաժող		Ռուսաստան
14.	Լուսային օպերատոր		Ռուսաստան
15.	Լույսի նկարիչ		Ռուսաստան
16.	Նկարիչ-բեմադրող		
17.	Զգեստների նկարիչ, ազգային - տարազների նկարիչ-դիզայներ	Երևանի գեղարվեստի ակադեմիա	
18.	Դիմահարդարներ		Ռուսաստան
19.	Բուտաֆոր-նկարիչներ-ձևավորողներ		Ռուսաստան
20.	Մենեջերներ	Երևանի պետական տնտեսագիտական համալսարան	
21.	Կեղծամ գործողներ		Ռուսաստան
22.	Թատերական զգեստների մոդելյորներ		Ռուսաստան
23.	Տիկնիկագործ-նկարիչներ		Ռուսաստան
24.	Տիկնիկային մեխանիզմների տիկնիկագործ		Ռուսաստան
25.	Ռեժիսոր		Ռուսաստան

1	2	3	4
26.	Պարուսույց		Գերմանիա, Շվեյցարիա
27.	Հուշարար	Երևանի Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն	
28.	Բեմի մեխանիկական սարքերի մասնագետներ (մոնտաժ, կահավորում, վերականգնում)	Երևանի Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն Գ. Սունդուկյանի անվ. ակադեմիական պետական թատրոն	

6.2.3. Հրատարակչության ոլորտ

	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ
1.	Մատենագետ	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
2.	Մատենագետ-վիճակագիր	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
3.	Մատենագետ-օպերատոր	Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան	
4.	Տառատեսակների մասնագետ	Հայաստանի ազգային գրապալատ	

6.3. Կադրերի վերարտակավորում

Մշակույթի ոլորտում կադրերի վերարտակավորման գործում գերակա են շուկայական հարաբերությունների հետ կապված մասնագիտությունները՝ մենեջերներ, մարքեթոլոգներ, գովազդի մասնագետներ, զբոսաշրջության ոլորտի մասնագետներ, ինչպես նաև նոր տեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների գծով վերարտակավորումը՝ տեղեկատվական բազաների ստեղծման, ինտերնետային տեխնոլոգիաների կիրառման, համակարգչային նոր ծրագրերի կիրառման մասով։

Կադրերի վերարտակավորման վերջնական ցուցակները (այդ թվում՝ նաև արտերկրում) կկազմվեն մշակութային կազմակերպություններից ստացված տարեկան հայտերի հի-

ման վրա։ Ծրագրի գործողության ընթացքում կարող են սահմանվել կադրերի վերարտակավորման այլ կազմակերպություններ՝ հաշվի առնելով կոնկրետ պահանջարկը և կադրերի վերարտակավորման համար անհրաժեշտ ուսումնական բազան։

7. Ծրագրի ֆինանսավորումը

Ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելվող այլ միջոցներով։

8. Ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

ա) մշակույթի ոլորտի համալրում՝ անհրաժեշտ մասնագիտական կադրերով, ինչը կնպաստի հանրությանը մշակութային ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանը.

բ) կադրերի վերապատրաստում, որը կապահովի մշակույթի մրցունակությունը հանրապետությունում և արտերկրում.

գ) կադրերի վերապատրաստում, որը կնպաստի մշակույթի ոլորտում ներդրված արդիական համակարգերի արդյունավետ գործարկմանը և ինովացիոն գործունեության զարգացմանը.

դ) կադրային ներուժի զարգացում՝ որը հնարավորություն կընձեռի Հայաստանի ինտեգրմանը համաշխարհային միասնական տեղեկատվական տարածքին, էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմանը, հայ մշակույթի հանրահռչակմանը.

ե) աշխատանքի շուկայում վերապատրաստված մրցունակ կադրերի առկայություն՝ որը կնպաստի ստեղծագործական գործունեության զարգացմանը և մրցակցությանը.

զ) լուծել հանրապետության մարզերում մշակութային կազմակերպությունները համապատասխան երիտասարդ մասնագետներով համալրելու, ինչպես նաև բնակչության զբաղվածության խնդիրների հարցը։

9. Գործողությունների ժամանակացույցը

	Միջոցառումները	Նպատակը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը	Կատարողը
1	2	3	4	5	6
1.	Ոլորտի աշխատատեղերի և մշակութային ծառայություններ մատուցող մասնագետների շուկայի ուսումնասիրում, վերլուծում, կադրային պահանջարկի շարունակական ճշգրտում	շուկայի ձևավորման և մասնագետների պատրաստման վրա ազդեցություն գործելու նպատակով մշակույթի բնագավառի ծառայությունների, աշխատուժի պահանջարկի հետազոտում	կապահովի մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերարտակավորման գործընթացի արդյունավետ կազմակերպում	2010 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ մշակույթի նախարարություն
2.	Կադրերի հաշվառում, տեղեկատվական բազայի նորացում	կադրային պահանջարկի ճշգրտում	մշակույթի ոլորտի առջև դրված նոր խնդիրներին ու շուկայական պահանջներին համապատասխան կադրային պահանջարկի ճշգրտում	2010 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ մշակույթի նախարարություն
3.	Մշակույթի ոլորտի մասնագիտությունների լրամշակված ցանկի կազմում	մշակույթի ոլորտին անհրաժեշտ մասնագիտությունների ցանկի սահմանում	մշակույթի ոլորտին անհրաժեշտ նոր մասնագիտությունների ներդրում, ինչպես նաև առկա մասնագիտությունների ցանկի համապատասխանեցում մշակութային կազմակերպությունների և շուկայում առկա պահանջարկին	2010 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ մշակույթի նախարարություն
4.	Հայաստանի Հանրապետության թան-	մասնագիտական որակավոր-	2010 թ. ընթացքում 1336	2010 թ.	ՀՀ մշակույթի

1	2	3	4	5	6
	գարանային և ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության կադրերի վերապատրաստման և վերարակավորման ծրագրերի իրականացում	ման բարձրացում ու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործում	թանգարանային և 120 ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության կադրերի վերապատրաստման և վերարակավորման արդյունքում կապահովի նրանց մասնագիտական որակավորումն ու աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործում	ընթացքում	նախարարություն
5.	Մշակույթի ոլորտում նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի ճշգրտում և ուսումնական հաստատություններում մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման մասնագիտությունների ցանկի լրամշակում, մշակույթի մասնագիտությունների գծով պետպատվերով սովորողների թվի ճշգրտում	մշակույթի ոլորտին անհրաժեշտ նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթությամբ կադրերի համալրման ապահովում	մշակութային կրթության պետական ուսումնական հաստատություններում նպատակային և արդյունավետ պետպատվերի և նոր մասնագիտությունների ներդրմամբ աշխատանքի շուկայում մրցունակ կադրերի առկայության ապահովում և ՀՀ մարզերի մշակութային կազմակերպությունները համապատասխան երիտասարդ մասնագետներով համալրման պայմանների ապահովում	2010 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն
6.	Ներկայացված հայտերի հիման վրա տարեկան վերապատրաստման ծրագրի կազմում	վերապատրաստման իրականացում	2010-2015 թթ. կիրականացվի մշակույթի ոլորտի 15462 կադրերի վերապատրաստում, ինչի արդյունքում կապահովի մշա-	2010 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարությունն

1	2	3	4	5	6
		4	կույթի մրցունակությունը հան- բապետությունում և արտերկ- րում, մշակույթի ոլորտում ներդրված արդիական համա- կարգերի արդյունավետ գործարկմանը և ինովացիոն գործունեության զարգացմանը		
7.	Ներկայացված հայտերի հիման վրա տարեկան վերաորակավորման ծրագրի կազմում	վերաորակավորման իրակա- նացում	վերաորակավորան արդյունքում կապահովի առկա կադրերի արդյունավետ տեղաբաշխումը, մշակույթի ոլորտում ժամանա- կակից տեղեկատվական միջոց- ների ներդրումը, կառավարման արդի համակարգերի կիրառ- ումը: Կադրերի վերաորակավո- րումը հնարավորություն կտա նաև մշակութային կազմակեր- պու- թյուններում նոր խնդիրներից բխող փոփոխությունների ըն- թացքում պահպանել փորձառու մասնագետներին և առավել արդյունավետ օգտագործելու նրանց մասնագիտական փորձը և կարողությունները	2010 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ մշակույթի նախարարությու ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ